# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, noramarghamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2018թվականի N 7

### ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության "Տեղական ինքնակառավարման մասին" օրենքի 14-րդ հոդվածով.ավագանին որոշեց՝

Հաստատել համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 26-ի արտահերթ թիվ 3 նիստի օրակարգը՝

1.Արարատի մարզի Նորամարգ համայնքի ղեկավար Սարգիս Բարդուխի Գալստյանի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին.

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ
2. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ
5. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Նորամարգ, noramarghamaynq@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՄԱՐՏԻ 2018թվականի N 8

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱՄԱՐԳ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ԲԱՐԴՈՒԽԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՙՏեղական ինքնակառավարման մասին՚ Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 3-րդ մասի դրույթներով.

Համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնքի ղեկավար Սարգիս Բարդուխի Գալստյանը (համայնքի ղեկավար է ընտրվել 2014թ մարտի 9-ին. լիազորությունների ժամկետը 4 տարի՝ մինչև 2018թ մայիսի 26-ը ներառյալ): 2018թ մարտի 11-ին տեղի են ունեցել համայնքի ղեկավարի և ավագանու ընտրություններ և գործող համայնքապետը չի առաջադրվել,ընտրվել է նոր համայնքի ղեկավար և ավագանի:
2018թ մարտի 22-ին Նորամարգի գործող համայնքապետ Սարգիս Բարդուխի Գալստյանը համայնքի ավագանուն է ներկայացրել դիմում ՝առողջական վիճակից ելնելով Արարատի մարզի Նորամարգ համայնքի ղեկավարի պաշտոնից իր հրաժարականի ՝ լիազորությունները վաղաժամկետ դադարեցման մասին.

2.Համաձայն "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգ համայնքի ղեկավար Սարգիս Բարդուխի Գալստյանի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնել:

3.Սույն արձանագրությունը կազմված է երկու օրինակից,որից մեկը մնում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Նորամարգի համայնքապետարանի աշխատակազմում,մյուսն ուղարկվում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի մարզպետարան՝Հայաստանի Հանրապետության կառավարություն և կառավարության լիազորած պետական կառավարման մարմին ներկայացնելու նպատակով:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԱՔՈ
2. ԳԱԶԱՐՅԱՆ ՅՈՒՐԻ
3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻՇԱ
4. ԹՈՐՈՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ
5. ԾԱՏՈՒՐՅԱՆ ԳՐԻՇԱ
6. ԿՅԱԶՈՒՄՅԱՆ ՍԵՐԺ
7. ՍԱՐԳՍՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ԳԱԼՍՏՅԱՆ